«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում

Հաստատություն՝ Երևանի հ. 87 մսուր-մանկապարտեզ

Դաստիարակ՝ Արմենուհի Ղանդիլյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……...…...3

1. Սաների մեջ ինքնուրույնության նախաձեռնողականության ու ստեղծգործական ունակությունների զարգացումը …… 6
2. Ոչ ավանդական նկարչություն……10
3. Գործնական համատեքստ ……11

Արդյունք,ամփոփում.....……16

Օգտագործված գրականության ցանկ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումն այսօր նախադպրոցական կրթության գլխավոր նպատակներից մեկն է: Սաների ստեղծագործական մտածողության, ինքնուրույն գործելու, նախաձեռնողի դերում հանդես գալու կարողությունների ձևավորումն ու զարգացումը դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Վերը նշված կարողությունների բնականոն զարգացումը նախադպրոցականի համար կարևոր հանգամանք է՝ ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու հարցում: Ինչպես հայտնի է, աշխարհաճանաչողությունը սկսվում է ընտանիքում: Երեխան փորձում է ամեն կերպ բավարարել սեփական հետաքրքրությունները՝ անուղղակի կերպով կուտակելով նոր հմտություններ ու կարողություններ: Այս առումով առանցքային է նաև առաջին շփումը հասակակիցների, դաստիարակների հետ, ինչը, որպես կանոն, նպաստում է, որպեսզի երեխան աստիճանաբար ինտեգրվի հասարակություն, բացահայտի իր թույլ և ուժեղ կողմերն ու կայանա որպես անհատ: Կարևոր է նաև խոսքի բնականոն զարգացումն ու վարվեցողության մշակույթի պահպանումը, որոնք իրենցից ենթադրում են դիմելաձև, ծանոթանալու, ողջունելու ընդունված ձևերի պահպանում, ուշադրություն հրավիրելու խնդրանք, ներողություն խնդրել, շնորհավորել: Երկխոսելու նման կաղապարներին երեխային պատրաստելը նպաստում է նրանց մեջ բարեկրթության գիտակցման ձևավորմանը: Նախադպրոցական տարիքի երեխաների հետ երկխոսության ճիշտ կառուցումը այս գործընթացի կարևոր բաղադրամասերից է: Անչափ կարևոր է, որ հաշվի առնվեն նախադրոցական կրթության պետական կրթական չափորոշիչով սահմանված դրույթները, որոնք ներառում է նախադպրոցական տարիքի երեխայի զարգացվածության, կրթադաստիարակչական մակարդակը սահմանող համապատասխան նորմեր և դրույթներ[1]:

Այս համատեքստում մանկավարժ-դաստիարակի գերխնդիրը մարդկային էության բացահայտումն է, հոգու կառուցումը: Հասարակության կողմից կրթական համակարգին ներկայացվող պետական պատվերը՝ ֆիզիկապես և հոգեբանորեն առողջ սերնդի ձևավորումն է, որի իրականացնողը հենց մանկավարժն է: Անգնահատելի է

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=21490 «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք:

նախադպրոցական հասակի երեխայի հետ տարվող ճիշտ ու համակողմանի աշխատանքը: Հարկ է նշել, որ այս տարիքում երեխան բավականին զգայուն է, հաճախ բնավորության այս կամ այն ընդգծված հատկանիշներով, ուստի տարվող աշխատանքը, հատկապես այս տարիքում, անկյունաքարային է ու կարևոր: Երեխայի անձի ձևավորման և զարգացման մեջ էական նշանակություն ունեն խոսքի և հաղորդակցության զարգացումը, ինքնուրույն խնդիրների հաղթահարումը, սեփական նախաձեռնություններով հանդես գալը: Սրանք երեխայի զարգացման ամենակարևոր գրավականներն են, որոնք թույլ են տալիս կյանքը նոր ճանաչող անհատին լիարժեք շփման մեջ մտնել շրջապատի հետ, հասակակիցների և մեծահասակների հետ համատեղ հետաքրքրություններ, կարողություններ, հմտություններ ձեռք բերել ու դրանք կիրառել: Հասարակության մեջ իր տեղը գտնելու համար երեխան պետք է արդյունավետ հաղորդակցվել սովորի: Խոսել սովորելով՝ երեխան նախ շփվում է ծնողների, այնուհետև նաև այլ մարդկանց հետ, սովորում է հաղորդակցվել համատեղ գործունեության ընթացքում: Այդ համատեղ գործունեությունը կարող է լինել խաղ, ուսում, իր ուժերի չափով աշխատանք: Այդ ամենի ընթացքում երեխան յուրացնում է իր միջավայրի սոցիալական փորձը, ինչն անչափ կարևոր է նրա հետագա կենսագործունեության համար: Սույն հետազոտական աշխատանքում հատկապես կարևորվել եմ նախադպրոցականի ինքնուրույնության, ստեղծագործականության ու նախաձեռնողականության խթանման անհրաժեշտությունը և այդ ճանապարհին մանկավարժ- դաստիարակի նպատակային ու կառուցողական մոտեցումները: Լիարժեք անհատականության զարգացման համար մարդը մանկուց պետք է գտնվի ստեղծագործությանը նպաստող հանգիստ մթնոլորտում: Ոչ ավանդական նկարչական տեխնիկան թույլ է տալիս բացել ներուժը և ավելի մոտենալ ստեղծագործական գործընթացին:

Բացի սովորական նկարչական տեխնիկայից նախադպրոցական ուսումնական հաստատություններում լայնորեն կիրառվում են կերպարվեստի ոչ ավանդական ոլորտները:

Այլընտրանքային նկարչությունը նկարչության ձև է, որը չունի սահմաններ և արգելքներ, որտեղ նկարչության գործիք է շրջապատում ցանկացած իր և որը բացահայտում է երեխայի ներաշխարհը և զարգացնում երևակայությունը, մտածելու և ստեղծագործելու կարողությունները: Նկարչության ընթացքում զարգանում են բոլոր կարևոր ֆունկցիաները՝ տեսողական ընկալում, պատկերացում, երևակայություն, հիշողություն, մտածողություն:

Միջին խմբում ևս նկարչությունը կարելի է դիտել որպես ինքնատիպ խաղ: Դա է պատճառը, որ սովորեցնել երեխային նկարել, չպետք է նրան զրկել ինքնուրուույնությունից, այլ նպաստել ազատ ու ստեղծագործ աշխարհընկալման ձևավորմանը:

Չևավորել նկարելու հմտություններ՝ զարգացնելով մանր մոտորիկան, տարիքային այս խմբում անհրաժեշտ է շարունակել աշխատանքը հետևյալ խնդիրների իրականացման ուղղությամբ.

- կարողանալ ճիշտ բռնել մատիտը, վրձինը,
- վրձնով տանել հորիզոնական, ուղղահայաց, ալիքաձև, թեք գծեր, անել վրձնահպումներ,
- ներկը վերցնել անհրաժեշտ չափով՝ ավելորդ մասը թողնել պնակի եզրին,
- թղթի վրա ազատ և վստահ կատարել վրձնահարվածներ,
- աշխատանքի վերջում վրձինը լվանալ, չորացնել և սրբել չոր լաթով,
- ճիշտ օգտտվել գույներից,
- բացի հիմնական գույներից (կարմիր,դեղին, կապույտ) սկսել աշխատել նաև այլ գույներով,
- հավասարաչափ ներկել պահանջվող մակերեսը, ստանալ երանգավորված գունային մակերես,
- նկարելիս կարողանալ ընդունել աշխատանքային ճիշտ դիրք, աշխատել ինքնուրույն և որոշակի տեմպով:

1.ՍԱՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Նախադպրոցական հաստատություններում սաների զարգացման, նրանց աշխարհայացքի ձևավորման նախապայմաններից գրեթե առաջնայինը բանավոր խոսքի զարգացումն է: Բանավոր խոսքին տիրապետում են խոսելու միջոցով, և կարևոր խնդիր է, որ երեխային հնարավորություն տրվի անկաշկանդ խոսելու, արտահայտվելու: Երեխայի համար պետք է անընդհատ ապահովել շփման ու հաղորդակցման համար լիարժեք պայմաններ, հարկավոր է թույլ տալ, որ երեխան իր մեջ կուտակված երևակայությունները, պատկերացումներն ու երազանքներն անպայման արտաբերի: Այսպես մենք չենք նվաստացնում նրա կամարտահայտության իրավունքը, ավելին՝ երեխան ավելի արագ է ինտեգրվում սոցիալական միջավայրին ու գիտակցում իր դերն այդտեղ: Կարևոր է պայմաններ ստեղծել երեխաների խոսքի ոգեշնչման համար, ինչը նրանց խրախուսում է, իսկ խոսքն անհամեմատ ակտիվանում է: Խոսքի ոգեշնչման առկայությունը նշանակում է, որ երեխան ունի ներքին մոտիվացիա արտահայտել իր մտքերը: Դա տեղի է ունենում հաղորդակցության հանգիստ, բնական միջավայրում[2]:

Բանավոր խոսքի զարգացման ամենաարդյունավետ ձևն, անշուշտ, բնական հաղորդակցումն է: Շատ կարևոր է ապահովել բնական հաղորդակցության ձևերի բազմազանությունը երեխայի խոսքի զարգացման գործընթացում: Որքան զարգացած է նախադպրոցականի խոսքը, այնքան նա ավելի ինքնուրույն է, նախաձեռնող ու ակտիվ: Երեխայի ընկալումների առումով հետաքրքիր միտք է արտահայտում խորհրդային հոգեբան Լև Սեմյոնովիչ Վիգոտսկին. «Ուսուցման գործընթացների ժամանակային հարաբերակցության և դրանց հոգեբանական հիմքերի զարգացման հարցի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զարգացումը միշտ առաջ է ընթանում ուսուցումից: Երեխան ավելի վաղ է տիրապետում որոշակի հմտությունների, քան գիտակցաբար և կամավոր կերպով սովորում է դրանք կիրառել: Զարգացումը տեղի է ունենում այլ տեմպերով, և ունի իր ներքին տրամաբանությունը»:[3]

Անընդհատ մտավոր գործունեություն կատարող երեխայի միտքը գնալով ավելի կազմակերպված է դառնում, հետևապես նաև խոսքն է լինում տրամաբանված և իմաստալից: Սահուն խոսքը մտավոր բարձր զարգացման արդյունքն է: Այսպիսով, նախադպրոցականի ընդհանուր զարգացման, ինքնուրույնության ու

Ն. Մկրտչյան, «Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման մեթոդիկա», Երևան 2019:

նախաձեռնողականության խթանման, ինչպես նաև մտավոր դաստիարակության խնդիրների համակարգում առանձնանանում է խոսքի զարգացումը: Զրույցը բանավոր խոսքի զարգացման գործնական միջոցներից է: Զրույցի կազմակերպումը ավելի մեծ հմտություն է ենթադրում, քան բուն զրուցելու կարողությունը: Նախադպրոցական մանկավարժության մեջ զրույցը դիտարկվում է որպես շրջակա միջավայրն ծանոթացման, ինչպես նաև կապակցման խոսքի զարգացման ու երեխայի սոցիալականացման միջոց: Այս համատեքստում շատ կարևոր է զրույցի նշանակությունը երեխայի մտավոր առաջընթացի համար, քանի որ այն նպաստում է նախադպրոցականի մտածողության զարգացմանը, օգնում է իմաստավորելու սեփական փորձը, ճիշտ ձևակերպելու միտքը, լսելու և հասկանալու ուրիշի խոսքը:

Նախաձեռնողականությունը նորարարությունների հանգեցնող մտքերի ակունքն է: Չէ՞ որ մի բան է տարաբնույթ մտքեր ունենալ, իսկ մեկ այլ բան՝ այդ հանճարեղ մտքերը զարգացնելն ու կյանքի կոչելը՝ ձեռնարկելով հստակ քայլեր: Պակաս կարևոր չէ ինքնուրույնությունը, որի համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և պահանջարկի համապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ և այլն: Մանկության տարիներին ազատ և դերային խաղերի առաջադրմամբ երեխային կարելի է ուղղորդել, հետևել նրա ընտրության սկզբնական քայլերին, սովորեցնել պատասխանատվություն կրել սեփական ընտրության համար, միջանձնային շփումներում լինել բարեվարք, հանդուրժող:

Հետաքրքրասիրության բավարարումը նույնպես կարևոր նախապայման է, որ նախադպրոցականը լինի ինքնուրույն: Այսպես է բավարարում իր շփման կարիքը, համալրում է գիտելիքների՝ նոր ձևավորվող գիտելիքների պաշարը, բառային պաշարը, այլ խոսքով՝ նախադպրոցականի հետաքրքրությունների բավարարումը վերջինիս իմացական ոլորտը սնուցող աղբյուր է:

Խոսքի զարգացման, սոցիալականացման, մի շարք կենսական նշանակության կարողունակությունների զարգացման համար նախադպրոցական տարիքն անփոխարինելի ժամանակաշրջան է: Այս տարիքում երեխան յուրացնում է հազարավոր նոր բառեր, արտահայտություններ ու դարձվածքներ, տարերայնորեն ընկալում լեզվական այն հիմնական ատաղձն ու յուրահատկությունները, որոնք հաճախ շատ մեծ ջանքերի գնով են հաջողվում չափահաս մարդկանց, սովորում է վարքագծի ու վարվեցողության կանոնները, ճանաչում իրեն շրջապատող իրերը, առարկաներն ու երևույթները: Այս հանգամանքը պետք է հաշվի առնել և

նախադպրոցական շրջանը դարձնել երեխայի խոսքի զարգացման հիմնական օղակ, նրա մեջ լեզվազգացողության արթնացման ու մշակման, մայրենի լեզվի հիմնական բառային ֆոնդի ուսուցման ժամանակաշրան:

Երեխան տանը, բակում, հարազատների հետ շփման ժամանակ սկսում է երկխոսել, գտնել իրեն հետաքրքրող միջավայր ու թեմա, որպեսզի բավարարի իր տարիքին բնորոշ հետաքրքրասիրությունը: Շատ կարևոր է, որ երեխաներն ավելի շատ խոսեն, արտահայտեն իրենց մտքերը, հետաքրքրվեն, հարցեր տան, արտահայտեն իրենց կարծիքը: Դաստիարակը պետք է կարողանա պահը որսա և ակտիվություն հաղորդի սաների գործողություններին, թույլ տա, որ վերջիններս հաճախակի ինքնուրույն լինեն, նախաձեռնեն խաղեր, կիսվեն իրենց մտահոգություններով: Բավականին արդյունավետ են ուսուցման գործնական մեթոդները: Ուսուցման գործնական մեթոդների խմբին են դասվում տարատեսակ վարժությունները, փորձերը, հետազոտությունները և մոդելավորումը: Ակտիվ ուսուցման մեթոդները (փոխգործուն մեթոդները) նպաստում են երեխաների ազատ և ինքնուրույն մտածելու, սեփական կարծիք հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Այդ մեթոդները զույգերով, խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ որոնումներին ու մտորումներին, դրանց քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը: Ուսուցման փոխգործուն մեթոդները համապատասխանում են երեխայակենտրոն ուսուցման սկզբունքներին և շատ արդյունավետ են: Փոխգործուն մեթոդները բացառում են որևէ մեթոդի առաջնայնությունը, գերակայությունը, ինչպես նաև մեկ մեթոդի գերակշռությունը մյուսների նկատմամբ:

Փաստորեն, կարելի է արձանագրել, որ ուսուցման երեխայակենտրոն մոտեցումը բավականին խոսուն է ու դաստիարակին հնարավորություն է տալիս լինել ուղղորդող-ուսուցանողի դերում՝ խրախուսելով երեխայի ինքնուրույն ձեռքբերումները: Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են՝ երեխայի իմացական գործընթացների կազմակերպումը, հետաքրքրությունների բացահայտումը, համագործակցային կարողությունների զարգացումը, անհատական առանձնահատկությունների բացահայտումը, հաղորդակցական ունակությունների ձևավորումը, տրամաբանական մտածողության զարգացումը, ինքնուրույնության խրախուսումը, վերլուծական կարողությունների ձևավորումը: Դաստիարակի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել կոնկրետ իրավիճակին, իր ունեցած մեթոդական զինանոցից ընտրել համապատասխան մեթոդը՝ ելնելով իրականացվող աշխատանքի նպատակներից:

Նախադպրոցական տարիքի երեխայի համար ստեղծագործական ունակություններն անհատական հատկություններ են, որոնք որոշում են ցանկացած ստեղծագործական գործունեության իրականացման հաջողությունը: Ստեղծագործությունը կարելի է անվանել նախադպրոցական կրթության շատ հատկությունների միաձուլումը: Այս բոլոր հատկությունների հիմքը երևակայությունն է և ստեղծագործական մտածողությունը, որի զարգացումը հանգեցնում է նախադպրոցական տարիքում ստեղծագործական ունակությունների բարելավման:

Նախադպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացման համար բավականին արդյունավետ միջոցներ ու մոտեցումներ կան նախադպրոցական մանկավարժության պրակտիկայում, որոնցից կարելի է առանձնացնել խաղային տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական պարապունքների ժամանակ:

Որպեսզի դաստիարակը կարողանա սանի մեջ խթանել ստեղծագործական ունակությունները, հարկավոր է երեխաներին չդնել կաղապարների մեջ, թույլ տալ ինքնաարտահայտման, սեփական կարծիքն անկաշկանդ արտահայտելու, ինքնուրույն գործունեություն կատարելու: Նկարչության, երաժշտության, մաթեմատիկայի պարապմունքների ժամանակ շատ հարկավոր է խրախուսել երեխաների ինքնուրույն գործունեությունը, քանի որ հենց նման կերպ կարելի է հիմք նախապատրաստել, որ երեխան անցնցում անցնի հնարավոր դժվարությունների միջով, տեսնի իրեն շրջապատող գեղագիտությունը, ստեղծագործաբար մոտենա իր աշխատանքին: Կերպարվեստի պարապունքի շրջանակներում կարելի է խնդրել, որ երեխան պատմի իր նկարի մասին, հիմնավորի գույների ընտրությունը, բնության գրկում զբոսանքներից հետո պատմի իր զգացողությունների, նախընտրելի եղանակի, մի խոսքով՝ սիրածի ու չսիրածի, հասկացածի ու չհասկացածի մասին: Այլ խոսքով՝ հարկավոր է նախադպրոցականին անդադար խոսեցնել, հարցեր տալ, խնդրել, որ երկխոսի, կիսվի իր մտածմունքներով, իր բառերով վերաշարադրի հեքիաթը, դուրս նայի պատուհանից ու պատմի այն , ինչ տեսնում է, առանց դաստիարակի օգնությամբ նկարի, ծեփի, աշխատի կոնստրուկտորներով:

Նախադպրոցական կրթության համակարգը պետք է ուղղված լինի ոչ միայն գիտելիքներով հարուստ, մտավոր գործունեության ընդունակ երեխայի զարգացմանը, այլև նրա անձնային հիմնարար որակների և սոցիալական հմտությունների զարգացմանը: Նախադպրոցական տարիքն առաջին հերթին երեխայի անձնավորության կայացման կարևորագույն շրջանն է: Այսպիոսվ, կարող ենք արձանագրել, որ նախադպրոցականի համար շատ կարևոր է ապահովել ինքնուրույնության մթնոլորտ, որտեղ նա կարող է ինքնուրույն գործել, որոշումներ

կայացնել, համագործակցել ընկերների հետ, համատեղ աշխատանքի միջոցով ունենալ հաղթանակներ:

Երեխաները տարբեր են, տարբեր են նրանց ընկալումները, ցանկությունները, երազանքներն ու վարքը, սակայն նրանք բոլորը ունեն պահանջմունքներ, որոնք հաճախ տարբեր են, ուստի և յուրաքանչյուրի հետ անհրաժեշտ է տանել անհատական աշխատանք, որպեսզի երեխան ունենա բնականոն զարգացում: Պետք է փորձել ճանաչել նրանց, հասկանալ, թե որ կարողունակությունն է նրանց համար դժվար հասանելի ու աշխատել հենց այդ ուղղությամբ:



Գործնական աշխատանք

Տեսակը՝ Նկարչություն ոչ ավանդական մեթոդներով

Թեմա՝ Կարկուտ

Նպատակը՝ Սովորեցնել բամբակե փայտիկներով պատկերել ամպեր և կարկուտ

Ամպերը ներկայացնել խիտ իրար կպած կետիկների

Կրկուտը իրարից հեռու ,ցրված կետիկների միջոցով

Խնդիրները՝ Բացահայտել երեխաների սոցիալականացման և զարգացման մեթոդական հիմքերը համատեղ գործունեության ընթացքում:

Գործնական մասում հիմնվելով փորձի վրա՝ շեշտադրել երեխաների ունակությունների զարգացնանը ինքնուրույնությանը, նախաձեռնողականությանը, ստեղծագործական ուղիները ոչ ավանդական նկարչության տեխնոլոգիաների օգնությամբ

Անհրաժեշտ պարագաներ՝ Երկնագույն ֆոնով նկարչական ալբոմի թուղթ, բամբակե փայտիկներ, կապույտ և սպիտակ գոաշ, լաթեր, ջրով բաժակներ, նմուշ օրինակներ

Պարապունքի անցկացման մեթոդիկան՝

Ամպը մթնեց, սկսեց գոռալ,

Անձրև տեղաց տեղատարապ,

Հետո հանկարծ թափվեցին ցած

Սառցե կլոր գնդիկներ;

Դա կարկուտ էր, որ ծեծեց

Կտուր, ասֆալտ ու հողեր;

Այնուհետև երեխաներին առաջարկել նկարել ամպեր, որոնցից երկրի վրա կարկուտ է թափվում; Հարց ուղղել նրանց, թե ինչպես կարելի է պատկերել կարկուտ;Լսել երեխաների պատասխանները,ցուցանմուշի վրա ցույց տալ և բացատրել ,թե ինչպես կարելի է նկարել կարկուտով լցված ամխեր. դրանք պատկերել մուգ կապույտ գույնով . բամբակե փայտիկները թաթախել մուգ ներկի մեջ և կողք-կողքի, իրար շատ մոտ, փայտիկները թղթին հպելով, պատկերել խիտ դասավորված կետիկներ; Իսկ ամպերից թափվող կարկուտը պատկերելու համար բամբակե փայտիկը թաթախել սպիտակ ներկի մեջ և իրարից որոշակի հեռավորության վրա վերևից ներքև

ուղղությամբ հպել թղթին: Թղթի վերևի մասում պատկերել ավելի խիտ դասավորված կետիկներ, ներքևում ավելի նոսր;Երեխաների ուշադրությունը հրավիրել մուգ կապույտ ամպերի և կարկուտի սպիտակ հատիկների վրա, ինչպես նաև՝ թղթի տարբեր հատվածներում կետիկների խտության վրա. ամպերի վրա կետիկներն այնքան մոտ են , որ կարծես հպվում են իրար, իսկ ցած թափվող կարկուտի հատիկները պատկերված են իրարից որոշակի հեռաորության վրա;

Թարմացնող վարժություն՝Ձեռքերի շարժումների և ծափերի միջոցով ցուցադրել մեղմ, հորդառատ անձրև, կարկուտ;

Եզրակացություն

Ինձ համար նկարչությունը մի աշխարհ է, որտեղ խոսում է ձեռքը և լռում լեզուն ; Նկարչությունը ձեռքի շարժումներ են , որոնք թվում են ոըղղակի շարժումներ , բայց դա այդպես չէ ամեն մի շաչժում մի գիծ է,որը գալիս է ներսից տրամադրությունից, հոգեվիճակից ; Նկարչության միջոցով արտահայտում ե իրենց ապրումները, հույզերն ու վախերը;

Երեխաների հետ երկար աշխատելով՝ հասկացանք , որ ոչ ավանդական նկարչությունը դրական ազդեցություն է ունենում նրանց զարգացման վրա; Նպաստում ինտելեկտի, մոտորիկայի զարգացմանը, այնպիսի հոգեկան ֆունկցիաների ձևավորմանը, ինչպիսիք են երևակայությունը հիշողությունը, տեսողական ընկալումը և մտածողությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=21490 «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք:

2. Ա. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն»:

3. Ն. Մկրտչյան, «Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման մեթոդիկա», Երևան 2019:

4. «3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մեթոդներով», Երևան 2018:

5. Լ. Սմբատյան, Լ.Սարգսյան Կերպարվեստի պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում